# Քրիստոնյա Հայաստան

2004, ԱՊՐԻԼ Բ, ԹԻՎ 8 (172)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՊՐԻԼԻ 24

## Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում



Ապրիլի 24-ին՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության հիշատակության օրը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ այցելեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու թեմակալ առաջնորդներ եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ:

Արարողությանը ներկա էին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, պետական այրեր եւ օտարերկրյա դիվանագետներ:

Ապրիլի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Հընթացս սրբազան արարողության՝ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*«Մահը ամենասարսափելին չէ, որ միշտ պատահի մարդու որդիներին, ավելի սարսափելին մոռացումն է, մահվան կյանքը: Մոռացումով մոռացվում են թե մոռացվածը եւ թե մոռացողը: Արդ, ապրիլ 24-ի նահատակների հիշատակով հիշվում ենք նաեւ մենք, որ ուխտադիր ենք ապրելու համար մեռնել եւ ընդհանուր շահի առջեւ մոռանալ մեր անձնականն ու այն ամենը, որ մեզ հեռացնում եւ շեղում է ճշմարիտ ուղուց»,-* նշեց Հայր Արշակն իր քարոզում:

Պատարագի սրբազան արարողությունից հետո Մայր Տաճարի հարեւանությամբ գտնվող եղեռնի նահատակների հիշատակության համար կանգնեցված աղոթքի եւ ուխտի խաչքարի մոտ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվեց



հոգեհանգստյան արարողություն:

Հոգեհանգստին ներկա էին բարձրաստիճան հոգեւորականներ, Անդրկովկասում Վատիկանի դեսպան եւ պապական նվիրակ Կլաուդիո արք. Գուջերոտին եւ բազում հավատացյալներ:

## Մեծատաղանդ երգչուհի Իզաբել Բայրաքդարյանը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում

Ապրիլի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Մետրոպոլիտեն» օպերայի մենակատար, կանադահայ աշխարհահռչակ երգչուհի Իզաբել Բայրաքդարյանին:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց մեծատաղանդ երգչուհուն՝ հայտնելով իր գնահատանքը հայ եկեղեցական երաժշտությունն աշխարհի տարբեր բեմերից հնչեցնելու համար:

**«Հաճելի է տեսնել ճանաչում եւ հռչակ ունեցող հայուհու, որն իր քայլերն է ուղղել դեպի իր հայրենիքը՝ իր սերն ու նվիրումը բերելով Հայաստան աշխարհին ու Մայր եկեղեցուն՝ Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնին: Դուք Ձեր գործունեությամբ եւ անդուլ աշխատանքի շնորհիվ գալիս եք հռչակը հավելելու մեր ազգի, պանծացնելու ինչպես Ձեր անունը, այնպես էլ մեր ազգի»**,- նշեց Նորին Սրբությունը:

«Հոգուս եւ սրտիս սնունդն է հայ հոգեւոր երաժշտությունը, քանզի անկարելի է ապրել առանց հավատքի, եւ այն բոլոր շնորհները, որ Աստված ինձ պարգեւել է, միշտ ի սպաս դնեմ հանուն մեր հայրենիքի եւ մեր սուրբ եկեղեցու»,- շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ հավաստեց Իզաբել Բայրաքդարյանը:

## Թեմակալ առաջնորդների ժողով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ ապրիլի 20-ին տեղի ունեցավ Հայ եկեղեցու հայաստանյան թեմերի առաջնորդների ժողով, որը քննության առավ քրիստոնեական դաստիարակության առաքելության իրականացման եւ թեմական ու համայնքային կյանքի կազմակերպական խնդիրներ: ժողովականներն անդրադարձան նաեւ Հայաստանում ներքաղաքական իրավիճակին եւ ուղերձ հղեցին ժողովրդին:**

Հայաստանի թեմակալ առաջնորդներս մտահոգություն ենք հայտնում ստեղծված ներքաղաքական լարվածության շարունակության առնչությամբ եւ անընդունելի համարում հասկացես տարածաշրջանում վճռորոշ զարգացումների ներկա իրավիճակում քաղաքական գնացումների ուղին, որը առճակատումների առաջնորդելով՝ խորացնում է անհանդուրժողության ոգին ու պառակտումը ժողովրդի մեջ եւ վտանգում կայունությունը Հայրենիքում ու անվտանգությունը մեր պետականության:

Ապրիլ 24-յան խորհրդի առջեւ կոչում ենք համայն մեր ժողովրդին, պետական կառույցներին, քաղաքական ուժերին ու հասարակական կազմակերպություններին՝ հավասարիմ մնալ Մեծ եղեռնի մեր զոհերի նվիրական հիշատակի լուսեղեն խորհրդին, որը ամբողջացնում է ազգային անկախ պետականության եւ ազատ ու ապահով կյանքի մեր ժողովրդի դարավոր ձգտումի, որով միշտ զորացել է ազգային միաբանության մեր ոգին:

Մեկն է շահը Հայրենիքի ու ժողովրդի, հետեւաբար կարողանանք հաշտության ոգով ունկնդիր լինել միմյանց, որպեսզի գտնենք հայրենաշինության անհրաժեշտ ճանապարհները: Մեր բոլոր հարցերին ու խնդիրներին պատասխաններ միշտ փնտրենք օրինականության պահպանման նախանձախնդրությամբ՝ հանդուրժողության, փոխադարձ հարգանքի ու ըմբռնողության ելակետերից՝ գերագույն նպատակ ունենալով մեր Հայրենիքի ներքին անդորրն ու կայունությունը եւ ժողովրդի միաբանությունը:

Մենք հավատում ենք, որ զատկական այս հոգենորոգ շրջանում, երբ Հարուցյալ Փրկիչը Իր խաղաղությունն ու սերն է տարածում մեզ վրա, կկարողանանք հաղթահարել ներքաղաքական այս անհանգիստ վիճակը եւս՝ հուրախություն մեզ եւ մեր բարեպաշտ ժողովրդի ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի:

## Գարեգին Բ Կաթողիկոսն իր գնահատանքն է հայտնում Կանադայի խորհրդարանին Հայոց Ցեղասպանության ճանաչման համար

Ապրիլի 22-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նամակ է հղել Կանադայի խորհրդարանի Համայնքների պալատի խոսնակ պարոն Փիթըր Միլիքընին: Նամակում Վեհափառ Հայրապետն աշխարհասփյուռ համայն հայության անունից իր երախտագիտությունը եւ գնահատանքն է հայտնել խորհրդարանի կողմից ապրիլի 21-ին ընդունված որոշման համար, որով Կանադայի օրենսդիր մարմինը պաշտոնապես ճանաչում եւ դատապարտում է Հայոց Ցեղասպանությունը:

Դիմելով խորհրդարանականներին՝ Նորին Սրբությունն ի մասնավորի նշում է. **«Մենք երախտապարտ ենք, որ 1915-1923 դաժան տարիներից հետո հայ ժողովուրդն ապաստան գտավ ինչպես Կանադայի օրհնյալ հողում, այնպես էլ ամբողջ աշխարհի տարբեր անկյուններում՝ արժանանալով բարեհաճ վերաբերմունքի:** 20-րդ դարի առաջին Ցեղասպանության զավակները ոչ միայն փրկություն գտան իրենց նոր հանգրվաններում, այլեւ բարգավաճեցին, զորացան եւ դարձան իրենց ապաստանած երկրների հավատարիմ եւ արժանավոր քաղաքացիները:

Ահավասիկ, մոտենում ենք 2005 թվականին՝ Հայոց Ցեղասպանության 90-րդ տարելիցին, սակայն ցեղասպանությունը դեռեւս շարունակում է մնալ մարդկության համար կարեւոր խնդիր: Ցեղասպանությունը երբեք չի կարող լինել մեր ժամանակների կրոնական, ընկերային եւ քաղաքական հակամարտությունների լուծման ուղի: Ցեղասպանության կանխման ուղին դրա ընդունումը եւ ճանաչումն է: Ցեղասպանության զոհերի՝ թե՛ ողջերի եւ թե՛ նահատակների համար արդարության հասնելու միակ ուղին դրա դատապարտումն է: Ցեղասպանությունը հանցանք է ոչ թե մեկ ազգի, այլ ավելին՝ մարդու եւ Աստծու հանդեպ: Այն ծանրագույն հանցանք է մարդկության հանդեպ: Աստծո առանձնակի շնորհը մարդուն կյանք պարգեւելն է: Կյանքի պաշտպանությունը վստահված է իշխանություններին, եւ յուրաքանչյուր պաշտպանված կյանք պարգեւ է, որը մենք նվիրաբերում ենք Աստծուն: Ուստի, բոլորը պետք է գիտակցեն, որ մարդկային կյանքի դեմ որեւէ ոտնձգություն ի սկզբանե պետք է դատապարտվի: Մարդկության տառապանքները վերջ կգտնեն ձեզ նման խիզախ մարդկանց գործերի շնորհիվ, որոնք նպաստում են արդարության հաղթանակին»:

Տես՝ էջ 2



# ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Օտար նվաճողները դարեր շարունակ Հայոց երկիրն ու ժողովրդին հնազանդեցնելու համար դիմել են բռնի հավատափոխության, քանզի գիտակցաբար թե բնազդով համարել են, որ հայերի անպարտելի էությունը սնուցող կենսատու աղբյուրը նրանց հավատն է: Այդ է պատճառը, որ պարսիկները, արաբները, թուրքերը, զանազան վաչկատուն հորդաներ եւ անգամ քրիստոնյա, սակայն այլադավան բյուզանդացիները հաճախ թիրախ են ընտրել մեր հավատն ու Եկեղեցին: Վարդանանց պատերազմի նախօրեին, երբ պարսից արքունիքում դավեր էին նյութվում Հայաստանի դեմ, հազարապետ Միհրներսեհը Հազկերտ Բ արքային խորհուրդ էր տալիս երկիրը ծնկի բերել հավատափոխության միջոցով, հորդորում հաշվի առնել ոչ միայն պետության նյութական շահերը, այլեւ ուշադրություն դարձնել հպատակների «հոգիների փրկությանը» ու նրանց կրոնափոխել դեպի պարսից հավատը: «Եթե հայերին ընտանեցնենք մեր օրենքներին,- ասում էր նա,- ու նրանք վարժվեն, ապա... կխզեն ձեզ ու Արյաց աշխարհը եւ կլքեն-կհեռանան կայսրից (Բյուզանդիայի - Վ. Կ.)», որի հետ հավատակից են: Մինչդեռ, եթե նրանք մնան իրենց հավատին, «գուցե թե ցանկանան ծառայել նրան, ում հավատին կան հաստատուն, եւ այս հանգամանքն էլ մեծ հոգս կդառնա Արյաց աշխարհի վրա»:

Դավանափոխության միջոցով հայ ժողովրդին հնազանդեցնելու փորձերը շարունակվում էին նաեւ հետագայում եւ լայնորեն գործադրվում արաբների կողմից: 850-855 թվականներին` արաբական տիրապետության դեմ հայերի հզոր ապստամբության ժամանակ, արաբական պատժիչ զորամասերը` արյունարբու Բուղայի գլխավորությամբ, զանազան բռնությունների ու հալածանքների հետ միասին, աշխատում էին մահապատժի սպառնալիքով հավատափոխել գերեվարված հայ իշխաններին ու հոգեւորականներին, իսկ համաձայնողներին` պարգեւներ խոստանում: Թովմա Արծրունին վկայում է, որ, չնայած արաբների խորամանկություններին ու սպառնալիքներին, հայերը գերադասում էին հաստատ մնալ հայրենի հավատին: Բազմաթիվ նահատակների թվում հիշվում է Ապուսահակ Վահեւունին, որը երկուստեք արհամարհելով խոստացված պատիվներն ու մարմնական չարչարանքները` հավատարիմ է մնում քրիստոնեական կրոնին: Նմանօրինակ ինքնազոհողությունների համար սուրբ նահատակներն ուժ ու զորություն ստանում էին ամենակարող Բարձրյալից, հայոց սուրբ հավատից: Նման ըմբռնումներն ավելի էին ամրապնդում մարդկանց հավատն առ Աստված ու Քրիստոսի Եկեղեցին:

Ուշագրավ է, որ սա ցնցող տպավորություն էր գործում նաեւ այլազգի ու այլակրոն մարդկանց վրա: Նրանցից շատերին զարմացնում էր այն իրողությունը, որ անգամ մահվան սպառնալիքն ի զորու չէ հայ մարդուն հարկադրել հրաժարվելու հայրենի հավատից: Թ. Արծրունին պատմում է, որ հիշյալ Ապուսահակի մասին ինքն իմացել էր Արտամետ ավանի քահանա Սամուելից, որն էլ երանելու նահատակության պատմությունը լսել էր «ինչ-որ պարսիկից, որը.... սուրբ վկայության սկզբից մինչեւ նահատակվելը եղել էր այնտեղ: Նա մտապահել էր սաղմոսը, որ ասել էր երանելին»: Սա մեզ հայտնի այն բազմաթիվ դեպքերից էր, երբ այլակրոն օտարազգի անձնավորությունը, ազդվելով նահատակի քրիստոսասիրությունից, մտապահել էր ու իբրեւ բարի հիշողություն, ինչպես նաեւ հիացմունքի արտահայտություն` պատմել ուրիշներին: Նմանօրինակ եղելություններն էլ նպաստում էին, որ օտարների մեջ ձեւավորվեն հայոց հավատի զորության մասին պատկերացումները: Դրանց ազդեցությամբ երբեմն Հայաստանում հաստատված շատ մահմեդականներ, անտեսելով անգամ անխուսափելի պատիժը, դիմել են համարձակ քայլերի` ընդունել քրիստոնեությունը: Հիշյալ ապստամբության ժամանակ, երբ Բուղայի պատժիչ հրոսակները լարված ու սարսափազդու մթնոլորտ էին ստեղծել երկրում, եւ թվում էր` հայ իշխաններին բռնությամբ մահմեդականացնելու սպառնալիքները վերջ չունեին, հանկարծ հայտնվում է «մահմեդական եւ ազգով պարսիկ» մի երիտասարդ ու հանուն քրիստոնեության` կանգնում նահատակվողների շարքում: Դա հայոց լուսափայլ հավատի մեծագույն հաղթանակներից էր, քանզի օտարների լարած որոգայթն ի չիք էր դառնում` հանդիպելով նրա ամենակարող զորությանը եւ բումերանգի պես ուղղվում այն լարողների դեմ: Պատմիչն այդ երիտասարդի մասին գրում է. «Իսկ երիցս երանելի ինչ-որ մեկը, երիտասարդ տարիքով, ինքը մահմեդական ու ազգով պարսիկ, Քրիստոսի հավատի սիրուն հետեւելով, եկավ հարեց Պատրիկ Անձեւացուն եւ խնդրեց մկրտել իրեն, որպեսզի կատարյալ լինի Տիրոջ պատվիրանները կատարելու համար»: Երիտասարդը նախապես հարել էր քրիստոնեությանը, սակայն երբ գերվում է, նրան ստիպում են ուրանալ հավատը, ուտի մահվան սպառնալիքի տակ նա համաձայնվում է հրաժարվել: Սակայն որոշ ժամանակ անց, զղջալով իր արարքի համար, կրկին վերադառնում է քրիստոնեական կրոնին եւ կամովին հանձն առնում նահատակության պսակը` քրիստոնյա գերիների հետ միասին: Ականատեսներից Վահրամ անունով մեկը պատմում է, որ նրան տեսել էր կառափնարանի վրա` պատրաստ ընդունելու մահը: Դահիճը բազմիցս հիշեցնում է նրան իր մահմեդական լինելու փաստը եւ պահանջում հեռանալ, սակայն երիտասարդը հաստատապես պնդում է` ասելով. «Ես քրիստոնյա եմ, մեռնում եմ Քրիստոսի համար եւ մկրտվում հանուն Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու` ոչ թե ջրով, այլ արյամբ», ապա ավելացնում. «Հեռու գնա, ա՛յ մարդ, ես մեռնում եմ Քրիստոսի համար»: Նա վազում էր հրապարակով, աղաղակելով հիշեցնում իր քրիստոնյա լինելու մասին, եւ դա այնքան ժամանակ, մինչեւ որ դահիճները «սրով հարվածեցին երանելուն, հատեցին գլուխը»: Եվ այդ պահին «սաստիկ լույս իջավ երկնից եւ ցոլանալով սուրբ մարմնի վրա, շրջափակեց այն տեղը, ուր ցայտել էր նրա արյունը»: Ավարտելով պատմությունը` Թովմա Արծրունին գրում է. «Եվ նահատակվեց սուրբ վկան փառավորապես.... Նրա անունը գրված է վարքագրության մեջ»:

Այսպիսով, հպանցիկ հայացքն անգամ բավական է համոզվելու համար, որ պատմության տարբեր ժամանակաշրջաններում հայոց հավատքի զորությունը գնահատող բազմաթիվ այլազգիներ, հաղթահարելով բազում դժվարություններ, ընդունել են քրիստոնեություն, դարձել նվիրյալներ եւ նույնիսկ նահատակվել:

*Վարուժան ԿԻՐԱԿՈՍՅԱՆ*
*Մանկավարժական գիտ. թեկնածու*



Լուսանկարը` Քեմալ Յալչընի

# ԹՈՒՐՔ ԳՐՈՂԸ ՀԱՅ ԴԱՏԻ ՊԱՇՏՊԱՆ

*Սկիզբը` էջ 4*

ճանաչողությունը կա՛մ գիրքն է, կա՛մ ճանապարհը: Այս դեպքում գիրքը բացառվում է, որովհետեւ Թուրքիան գրով ժխտում է պատմական անցյալի իրողությունները, մնում է ճանապարհը, որը պիտի տաներ դեպի չգրված գիրքը, դեպի չգրված գրքի իրական հերոսը` հայ մարդը...

**Բ. ՎԵՊԸ: ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ: ԴԵՊԻ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ**

1998 թ. հուլիսի 11-ին Քեմալ Յալչընը հանրակառքով մեկնում է Ամասիա եւ թուրք ծանոթների միջոցով փորձում հայերի գտնել: Ոմանք խուսափում են` դրա մեջ կենսաբանորեն ձեւավորված վտանգ տեսնելով, ոմանք գաղտնի օգնում են: Ընթացքում, հիմա եւ հետո, անընդհատ խոսք ու զրույց է հայերի մասին: Հիշողությունը հասնում է դեպի իրադարձությունների սկիզբը եւ արձանագրում. «Ժամանակին, երբ հայերը կ'աքսորեին, թուրքերեն ոմանք գեղեցիկ հայ աղջիկներն ու կիները առեր են: Ոմանք որպես երկրորդ կին, ոմանք որպես սպասուհի, ոմանք որպես հարճ ըրեր են: Հայերեն ոմանք էլ իսլամացեր, մնացեր են»:

Սա կենսագրությունների գիրք է, եւ յուրաքանչյուր կենսագրության մեջ կա ժողովրդի պատմական ճակատագրի անդրադարձը:

Առաջին հանդիպումը եւ առաջին կենսագրությունը: Սաֆիյե հանըմ: Ծնունդով` Զարուհի: Սաֆիյե է անվանափոխել սկեսուրը` ի պատիվ իր մահացած աղջկա: Իսկ ինքը Զարուհի էր` ի պատիվ եղեռնի զոհ մորաքրոջ: Մոր գերդաստանից միայն մայրն է ազատագրվել: Ծնվել է 1931-ին Ամասիայում: Հակառակ ծնողների կամքի փախել է Մուսթաֆայի հետ, որը թե՛ թուրք էր, թե՛ ամուսնացած: Փախել է, որովհետեւ սիրել է, եւ այդ ժամանակ հային թուրքի չէին տալիս: «Մուսթաֆան ինծի համար կրակե շապիկ մըն էր»,- սա Սաֆիյեի խոսքն է ու սիրո չափը: 16 տարեկանում ծնել է իր առաջին աղջկան` Թյուրքանին: Ապրուստի միջոցը` դերձակություն: 46 տարի միասին են ապրել: Ինքը եղել է երկրորդ կին եւ մեծ տիկնոջ հետ համերաշխ: Մուսթաֆան մահացել է 1992-ին:

Այսքանից հետո Զարուհի-Սաֆիյեն անցնում է իր ծնողների պատմությանը, որը հայոց մեծ ողբերգությունն է եւ հեղինակի առաջին զգացական անդրադարձը. «Սաֆիյե կյուներին պատմածները առաջին անգամ կը լսեի: Զիս ամբողջ տակնուվրա բերավ: Ինչո՞ւ: Ինչո՞ւ եղեր են այս բաները: Գլխուս մեջ հարցումներ շատ էին, պատասխանը` քիչ»:

Հետո Սաֆիյեին փոխարինում է Հյուրիեթ անունով մեկ ուրիշ տիկին` մեկ ուրիշ կենսագրություն, որպես նույն պատմության հերթական մի էջ: Սա պատմում է Ադայամանի, Այնթափի, Մարաշի շրջանների հայերի մասին լածները: «Դեպքերեն ոմանք պատմելու ատեն լացը կու գար»,- անդրադառնում է հեղինակը:

Այստեղի ծանոթներին ասում է, որ Կարին, Կարս, Անի ու Վան պիտի գնա, իսկ նրանք մտահոգ են. «Աման, ուշադրություն ըրե: Հայկական հարցը հույներուն չի նմանիր: Պատերազմական գոտի է, ուր որ պիտի երթաս: <...> Հայկական հարցը ամեն մարդու հետ չես կրնար խոսիլ: Ուշադրություն, շատ զգույշ»: Զգուշությունն անհրաժեշտ էր ծպտյալ ոստիկանների ցանցը չընկնելու համար:

Այստեղից հեղինակն ուղեւորվում է դեպի Կարին (Էրզրում), ճանապարհն անցնում է Երզնկայով: Կարին հասնելուն պես որոշում է գնալ Կարս, այնտեղից` Անի: Դիմում է զբոսաշրջության տեղեկատվության կենտրոն եւ գրանցում այս երկխոսությունը. «- Անի պիտի երթամ: Անիի մասին տեղեկատու մը ունի՞ք: - Անին ո՞ւր է: - Անին Ղարս է եղեր: - Ես չեմ գիտեր: Դուն ի՞նչ տեղեկատու կ'ուզես»: Ի վերջո ծառայողը անգլերեն ու գերմաներեն ինչ-որ գրքույկներ է տալիս, որոնցից մեկի շապիկին զետեղված էր Նեմրութ լեռան վրա գտնվող հեթանոս աստվածների կիսանդրիների հայտնի լուսանկարը: Կարսի դիմաց գրված է` Առաքելոց թանգարան, 10-րդ դարի կառույց: «Սակայն որո՞նց կողմե կառուցված, ո՞ր ժողովրդին, ո՞ր ազգին պատկանած ըլլալը, ով գիտե ինչու, չէ արձանագրված»,- սա հեղինակի անդրադարձն է` «ով գիտե ինչու, չէ արձանագրված» արտահայտության թափանցիկ ակնարկով: Այնուհետեւ. «Հա՛, գտա: «Անի. Ղարսեն 42 մղոն հեռավորություն ունի, ճիշդ Սովետական սահմանին` Մետաքսի ճամբուն վրա: Երեւելի պարիսպներ, բազմաթիվ եկեղեցի ու մզկիթի փլատակներով, միջին դարեն մնացած քաղաք մը»: Ժամանակին այս քաղաքին մեջ ովքե՞ր ապրած են, պարիսպները, եկեղեցիները ովքե՞ր կառուցած են արդյոք: Հարցումներ, հարցումներ...»:



Լուսանկարը` Քեմալ Յալչընի

*Շարունակելի*

*Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ՊԱՏԿԵՐՈՒՍՈՒՅՑ

## «ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ»՝ ԸՍՏ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆԻ

## Քառասուն օրական Հիսուս Քրիստոսի գալուստը տաճար

*Սկիզբը՝ թիվ 6-7*

եկեղեցու ծոցում ծնված այդ ավանդությունը, որ արդեն հայտնի էր Ժ դարում՝ մասնավորապես եկեղեցական պատմիչ Նիկիֆոր Կալլիստին (այդ ավանդության մեկ այլ խմբագրություն ծանոթ է Ս. Գրիգոր Նարեկացուն. տես «Քառասնօրեայ գալստեան Տեառն» տաղը) Սուրբ Աստվածածնի անեղծ հղիացման եւ Աստվածորդու մարդեղացման մասին մարգարեությունը կապում է «Տյառնընդառաջի», ավելի կոնկրետ՝ Սիմեոնի անձի հետ: Այս ավանդության առաջացման պատճառը հավանաբար Ղուկաս ավետարանչի հետեւյալ տողն է. «Սուրբ Հոգուց հրամայված էր իրեն (այսինքն՝ Սիմեոնին - Ա. Ա.) մահ չտեսնել, մինչեւ որ տեսներ Տիրոջ Օծյալին» (26): Հարկավոր էր բացատրել Սիմեոնի երկարակեցության գաղտնիքը:

Այդ է պատճառը, որ մանրանկարներում Սիմեոնը պատկերվում է ծերունու տեսքով: Այդպես է նաեւ Թորոս Ռոսլինի մոտ: Սիմեոնը ներկայացված է սպիտակ, երկար մազերով եւ սպիտակ մորուքով: Այդ ծերունին վկան ու խոստովանողն է Եսայու նկարագրած Փրկիչ-Մեսիայի (ԾԳ 1-12), Եսայու մարգարեության կատարման: Ավելին, ըստ Ղուկասի՝ Սիմեոնը, գիրկն առնելով Մանուկ Հիսուսին, ինքը եւս մարգարեանում է: Սակայն այդ մարգարեությունը վերաբերում է հետագա իրադարձություններին, որոնք գրանցված են Նոր Կտակարանում: Սիմեոնը կապող օղակ է հնի եւ նորի միջեւ: Նա ծերունին է: Այդ ծերությունը խորհրդանշում է Հին Ուխտը՝ անկատար Օրենքը, որն ի զորու չէ փրկելու, բայց Սիմեոնը, Օրենքի պատվիրանների տակ կքած, որպես հավատով սրբագործված սպասումի պարգեւ, իր գրկում ունի Մեսիա-Փրկչին՝ Նրան, Ով մարդկանց հետ կապելու է Նոր Ուխտ, տալու է Նոր Օրենք՝ այս անգամ արդեն շնորհական՝ Կատարյալ ու Փրկագործող: «... Երբ ժամանակը իր լրումին հասավ, Աստված ուղարկեց Իր Որդուն, որը ծնվեց կնոջից եւ մտավ օրենքի տակ՝ փրկելու համար նրանց, որ օրենքի տակ էին, որպեսզի մենք որդեգրություն ընդունենք» (Գաղատ. Դ 4-5): Ժամանակը լրացել է... Հիշենք, որ մեր մանրանկարում Սիմեոն Ծերունին քառասնօրյա Հիսուսին պահել է զոհասեղանի վրա:



### Զոհասեղանը-Հիսուս Քահանայապետ

Զոհասեղանը ծածկված է հուշկապարիկների պատկերներով: Հուշկապարիկները հիշատակվում են գրաբարյան Աստվածաշնչում՝ կրկին Եսայու մարգարեության մեջ (ԺԳ 21, ԼԴ 11, 14): Առաջին անգամ՝ երբ Եսային մարգարեանում է Բաբելոնի վախճանը, երկրորդ անգամ՝ երբ նա խոսում է Եդոմի դատաստանի մասին: Հրեաները խուսափում են Աստծո կամքը կատարելուց, ընկնում անհավատության մեջ, ընդօրինակում հեթանոսների ամբարշտությունը, երկրպագում կուռքերին, եւ որպես հետեւանք՝ վրա է հասնում աստվածային պատիժը՝ ամայանում է նրանց երկիրը, ժողովուրդն էլ հայտնվում է գերության մեջ: Սակայն Տերը, Իր մեծ ողորմածությունից դրդված, փրկում է գերությունից Իր ժողովրդին, հարվածում եւ կործանում է հեթանոսներին ու նրանց քաղաքները: Ահա Բաբելոնի եւ Եդոմի ավերակներում էլ, որպես ավերումի եւ մահվան նշան, բնակվում են հուշկապարիկները:

Բայց այնուամենայնիվ տարօրինակ ու անհասկանալի է տեսնել Երուսաղեմի տաճարի զոհասեղանին պատկերված հուշկապարիկներին: Ի՞նչ առնչություն կարող է ունենալ հեթանոսական դիցաբանությունից վերցված կես կին - կես թռչուն ծիվաղը Հիսուս Քրիստոսի տնօրինություններից մեկին վերաբերող մանրանկարի հետ: Պարզվում է՝ ունի:

Հուշկապարիկ երեւակայական կենդանին, ըստ հեթանոսական առասպելաբանության, բնակվում է ծովում կամ ավերակներում եւ նույնական է հունական դիցաբանության Սիրենային: Հուշկապարիկ-սիրենաները, գայթակղելով մարդկանց քաղցրահունչ երգերով, կործանում են նրանց՝ սպանում եւ տանում խավարի ստորերկրյա թագավորություն, այլ խոսքով՝ դժոխք: Սիրենան մահվան խորհրդանիշն է: Պատահական չէ, որ անտիկ շրջանի գերեզմանաքարերին շատ հաճախ կարելի է հանդիպել դրանց պատկերներին: Սակայն հետագայում, մասնավորապես միջնադարյան արվեստում Սիրենա խորհրդանիշը, կրելով որոշ քրիստոնեական-իմաստային ազդեցություններ, փոխակերպվեց դրախտահավքի՝ Սերենայի՝ կույս թռչնի, որը իջնում է դրախտից երկիր եւ հիացնում մարդկանց իր երգով: Եվ քանի որ դրախտը կյանքի խորհրդանիշն է, ուրեմն «Տյառնընդառաջ» մանրանկարում հուշկապարիկի խորհրդանշական իմաստը երկուսն է՝ էապես իրար հակադիր հասկացություններ՝ մահ եւ կյանք, դժոխք եւ դրախտ: Անշուշտ, միջնադարի արվեստագետը քաջատեղյակ էր հուշկապարիկների երկակի նշանակությանը:

Զոհասեղանին խաչազարդ գիրք է դրված եւ ծածկված է թափանցիկ, ծիրանի քողով: Գիրքը, որպես խորհրդանշան, պատկերագրության մեջ աստվածային հայտնության խորհուրդն ունի, իսկ երբ խաչազարդ է, ապա խորհրդանշում է հավատը: Ուրեմն այս խորհրդանշանի նախնական իմաստն է՝ հայտնություն եւ հավատ: Սակայն գիրքը քողածածկ է: Այդ քողը նշանակն է Հին Ուխտի ստվերակերպության, որտեղ տարբեր օրինակներով թաքնախորհուրդ ծանուցվում է Մեսիա-Փրկչի ինչպիսին լինելը: Մասնավորապես Փրկչի գալուստով եւ քավչարար մահվամբ՝ խաչելությամբ կիրականանա տնօրինական անցումը մահվանից դեպի կյանք, դժոխքից դեպի դրախտ: Սա են ակնարկում գրքի վրայի խաչն ու Մանուկ Հիսուսի խաչազարդ լուսապսակը: Այդ զոհաբերական մահվան խորհրդանիշն է բուն զոհասեղանը եւ նրա եռաստիճան պատվանդանը, որը խորհրդանշում է Գողգոթայի բարձունքը: Եսային, կանխասելով Մեսիա-Փրկչի խաչելությունը, գրում է. «... Նա խոցվեց մեր մեղքերի համար եւ մեր անօրենությունների համար դատապարտվեց. մեր խաղաղության համար Նա պատիժ կրեց, եւ Նրա վերքերով մենք բժշկվեցինք: ... Ինչպես ոչխար՝ Նա մորթվելու տարվեց, եւ ինչպես գառ՝ անմռունչ կանգնած է խուզողների առաջ...» (ԾԳ 5, 7)

Հիսուսը գալիս է տաճար, որտեղ կատարվի Օրենքը, որը զոհ է պահանջում: Այդ նպատակով տաճար են բերվում երկու տատրակ: Սակայն մանրանկարի խորհրդաբանությունն այլ բան է ասում: Զոհը Ինքը Հիսուսն է, ավելին՝ Նա ոչ միայն զոհաբերվողն է, այլեւ զոհ մատուցողը: Մեսիական ծառայության այս կողմը վերաբերում է Հիսուսի **Քահանայապետ** լինելուն: «... Շատ քահանաներ եղան, որովհետեւ մահը արգելք էր լինում, որ նրանք տեւապես քահանա մնան: Իսկ սա (Հիսուս Քրիստոսը - Ա. Ա.), հավիտենական լինելու պատճառով, ունի անանց քահանայություն: ...Ինչպես այլ քահանայապետներ, պետք չունի նախ իր մեղքերի համար զոհեր մատուցելու եւ ապա՝ ժողովրդի մեղքերի համար. իսկ Քրիստոս մեկ անգամ առ միշտ կատարեց այդ բանը, քանի որ Ինքն Իրեն պատարագ մատուցեց: ...Քրիստոս ոչ թե ճշմարտության օրինակ եղող ձեռակերտ սրբարանը մտավ, այլ՝ բուն իսկ երկինքը... ոչ էլ նոխազների եւ զվարակների արյունով, մի անգամ ընդմիշտ Իր իսկ արյամբ մտավ սրբարան՝ հավիտենական փրկություն ապահովելով...» (Եբր. Է 23-24, 27, Թ 12):

### Ամփոփում՝

Թորոս Ռոսլինի «Տյառնընդառաջ» մանրանկարի բոլոր դիտարկված կերպարներն ու խորհրդանշանները ցույց են տալիս, որ սա Ղուկասի Ավետարանի համապատասխան դրվագի գեղարվեստական պարզ վերապատումը չէ: Մանրանկարի պատմողական կողմին գումարվել է նաեւ խորհրդաբանականը՝ սիմվոլների օգնությամբ բացահայտվող պատկերի ներքին իմաստը, որը խոսում է Մեսիա-Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի ծառայական կերպերի մասին: Նա Թագավոր է, Մարգարե եւ Քահանայապետ: Երկնքի եւ երկրի՝ հոգեւորի ու նյութականի Արարիչն ու Տերը՝ Թագավորը, գալիս է երկիր, մարգարեանում-ավետարանում է արարածի փրկության մասին եւ հանուն այդ փրկության՝ որպես մշտնջենական Քահանայապետ՝ զոհաբերում է Ինքն Իրեն: Իսկ զոհաբերությունը կատարվելու է խաչի վրա: Դա է ակնարկում մանրանկարի պատկերաստեղծական-հորինվածքային ուղղահայաց ու հորիզոնական խաչաձեւը: Ուրեմն մանրանկարը ոչ միայն քառասուն օրական Հիսուսի Երուսաղեմի տաճար գալու մասին է, ոչ միայն բացահայտում է Հիսուսի Ով լինելը, այլեւ անդրադառնում է խաչի խորհրդին:

*Ավետ ԱՎԵՏԻՍՅԱՆ*

## ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

# ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

***Մեծ պահքի սկզբից մինչեւ Ծաղկազարդ եւ ապա՝ Ավագ շաբաթից մինչեւ Սուրբ Զատիկ Գուգարաց թեմի հավատավոր հայորդիներն աղոթքով, պահքով եւ ուխտագնացություններով էին պատրաստվում դիմավորելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը:***

### ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեծ պահքն առավել ամուր պահելու եւ հոգով էլ ավելի զորանալու համար մարտի 13-ին՝ Սուրբ Հովհան Օձնեցու հիշատակության օրը, բազմաթիվ ուխտավորներ, ավանդույթի համաձայն, ուխտի գնացին սուրբի շիրիմին: Առաջնորդանիստ Սբ. Աստվածածին եկեղեցու ուխտավորները՝ ՔԴԿ ուսուցիչներ, Վանաձորի հանրակրթական դպրոցների Հայոց եկեղեցու պատմության ուսուցիչներ, ԵՄՔԸ երիտասարդական միության անդամներ, օրհնությամբ Գուգարաց թեմի բարեխնամ առաջնորդ Տեր Սեպուհ եպս. Չուլջյանի եւ հոգեւորականների առաջնորդությամբ, գնացին Օձուն եւ այնուհետեւ՝ Արդվի: Օձունի Սբ. Աստվածածին եկեղեցում կատարվեց ընդհանրական գոհաբանական աղոթք՝ մեր երկրի բարգավաճման, եկեղեցու պայծառացման, հայ ընտանիքների խաղաղ գոյատեւման համար: Արդվի գյուղում, որտեղ գտնվում է սուրբի շիրիմը, ուխտավորներին միացան նաեւ Շիրակի թեմի հոգեւոր ընծայարանի սաները, Ս. Աստվածածին եւ Ս. Հակոբ եկեղեցիների երիտասարդաց միության անդամները եւ ուրիշներ: Համատեղ աղոթքով, միակամ ու միաբան հոգով՝ ուխտավորները մոտենում էին սուրբի հրաշագործ շիրիմին, խոնարհվելով համբուրում եւ փափագում ս. Հովհան Օձնեցի հայրապետի բարեխոսությամբ ստանալ Աստծուց իրենց խնդրածը:



### ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆ

Ապրիլի 7-ին՝ Սուրբ Աստվածածնի Ավետման տոնին, որ Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակով հռչակվել է նաեւ մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության օր, թեմակալ առաջնորդի օրհնությամբ եւ ՔԴԿ-ի նախաձեռնությամբ այս տարի առանձնակի ուշադրության էին արժանացել «Լուսաստղ» ՀԿ-ի հաշմանդամ կանայք եւ աղջիկները: Վանաձորի Սբ. Աստվածածին եկեղեցում, քահանայի օրհնության ու բարեմաղթանքի խոսքն ունկնդրելուց, մոմերի խորհրդավոր լույսի ներքո իրենց աղոթքն առ Աստված հղելուց հետո, հրավիրյալները գեղեցիկ ասմունքով երախտագիտություն հայտնեցին կազմակերպիչներին եւ գոհունակությամբ հեռացան եկեղեցուց՝ իրենց հետ տանելով փոքրիկ ընծաներ:

### ԱՎԵՏԻՍ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ

Ծաղկազարդի կիրակին, որ խորհրդանշում է Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ, սկիզբն է մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին 7 օրերի ուսուցումների ու չարչարանքների, որն ավարտվում է Տիրոջ խաչելությամբ եւ հարությամբ: Գուգարաց թեմի գործող բոլոր եկեղեցիներում Ծաղկազարդի կիրակին նշանավորվեց Սուրբ եւ Անմահ Պատարագով՝ հավարտ որի բազմաթիվ հավատացյալների բաժանվեցին ուռենիների ոստեր:

Երկուշաբթիից սկսված Ավագ շաբաթվա յուրաքանչյուր օր եկեղեցիներում կատարվեցին օրվա խորհուրդն արտահայտող արարողություններ, որոնց մասնակից դարձան թեմի բազմաթիվ հավատացյալներ: Հատկապես սրտառուչ էին Ավագ հինգշաբթի օրվա արարողությունները: Առավոտյան մատուցվեց Սուրբ Պատարագ՝ ի հիշատակ Վերնատանը Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման, ապա կատարվեց Ոտնլվայի արարողություն: Վանաձորի Սբ. Սարգիս եւ Սբ. Աստվածածին եկեղեցիներում Ոտնլվայի անմիջական մասնակիցը դարձան Վանաձորի մանկապարտեզների 24 սան: Սբ. Աստվածածին եկեղեցում արարողությունը կատարվեց ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի: Արարողության ավարտին հավատացյալներն օրհնված յուղ տարան իրենց տները՝ Քրիստոսի հարատեւ կենդանությունն իրենց տանն ունենալու ակնկալիքով: Երեկոյան կատարվեց Խավարման կարգ՝ խորհրդանշելով Տիրոջ չարչարանքներն ու խաչելությունը:

*Շարունակությունը՝ էջ 8*

## ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

*Սկիզբը՝ էջ 7*

Ավագ ուրբաթ օրը եկեղեցիներում խորհրդանշական կերտով կատարվեց Քրիստոսի թաղման կարգը: Ավագ շաբաթ օրը՝ ճրագալույցի Սուրբ Պատարագի ավարտին, համայն քրիստոնյա ժողովրդին տրվեց Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության ավետիսը, որով եզրափակվեց Տիրոջ չարչարանքների շաբաթը, եւ ավետվեց Նրա հարությունը մեռելներից: Ճրագալույցի Պատարագից հետո հավատավոր մարդիկ՝ վառվող մոմերով, Սուրբ Հարության ավետիսի լույսը եկեղեցուց տարան տուն:



Կիրակի օրը եկեղեցիներում մատուցվեց Սուրբ Հարության Պատարագ: Վանաձորի առաջնորդանիստ Սբ. Աստվածածին եկեղեցում պատարագիչն էր Գուգարաց թեմի բարեխնամ առաջնորդ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը: Սրբազան հայրը Սուրբ Հարության հրաշափառ ավետիսը տվեց ներկաներին եւ իր հայրական հորդորով թեմի հավատացյալներին կոչ արեց Հարության գաղափարով առաջնորդված՝ պահպանել միակամություն, սեր ու հանդուրժողականություն միմյանց նկատմամբ:

Սուրբ Հարության Պատարագի ավարտին, ավանդույթի համաձայն, Վանաձորի Սբ. Աստվածածին եւ Սբ. Սարգիս եկեղեցիների խաչքավորներ Արմեն Մխոյանի եւ Վիլիկ Եղիկյանի կողմից ժողովրդին ընծայվեցին զատկական ձվեր: Ապա Վանաձորի Սբ. Աստվածածին եկեղեցու Ծխական խորհրդի անդամները եւ Սբ. Սարգիս եկեղեցու խաչքավորը, քահանա հայրերի առաջնորդությամբ, Սուրբ Հարության սքանչելի ավետիսը տարան Վանաձորի ծերանոց, մանկատուն, ուր սպասում էին նրանց հույսով ու սիրով:

Հարության պանծալի ավետիսը ՔԴԿ ուսուցիչների կազմակերպած միջոցառումներով եւ զատկական տոնախմբությամբ մտավ նաեւ ուսումնական հաստատություններ (քոլեջ, դպրոց ու մանկապարտեզ)՝ ցնծություն ու բերկրանք պատճառելով մանուկներին ու մեծերին: Նրանց՝ ուրախությունից ճառագող աչքերն ու տոնական տրամադրությունը հավատ ու սեր էին տարածում շուրջբոլորը՝ Հարության հույս ավետելով մասնակիցներին:

## ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

### ՎԵՐԱՕԾՎԵՑ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Մարգահովիտ գյուղի ժողովրդի համար ապրիլի 17-ը նվիրական ու պատմական օր էր:

Մարգահովիտը Հայաստանի ամենահին շեներից մեկն է, որի մասին հիշատակությունները սկիզբ են առնում դեռեւս բրոնզե դարից: Այսօր էլ այն մեր հանրապետության ամենամեծ գյուղերի շարքում է: Գյուղի միակ եկեղեցին, որի հիմքերը պահպանվել են 5-րդ դարից, ամբողջությամբ վերակառուցվել է 1872 թվականին: Խորհրդային աստվածուրացության տարիներին եկեղեցին վերածվել էր գոմի, պահեստի, հարդանոցի՝ բախտակիցը դառնալով իր նման շատ ու շատ եկեղեցիների:

Եվ ահա ապրիլի 17-ին, հանդիսապետությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, կատարվեց Մարգահովիտ գյուղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերաօծման արարողությունը: Եկեղեցին նորոգվել է ռուսաստանաբնակ մարգահովիտցի Սերժիկ Կոծինյանի նվիրատվությամբ:

Հազարավոր մարգահովիտցիներ էին եկել մասնակից դառնալու այս սրբազան տոնին: Արարողության ավարտին թեմակալ առաջնորդն իր օրհնության ու շնորհավորանքի խոսքն ուղղեց ներկաներին՝ մասնավորապես ասելով. «Աղոթքի տուն ենք օրհնում ու վերաօծում: Բացելով այս եկեղեցու դռները՝ փառք ենք տալիս Բարձրյալին, որ այս օրվան արժանացրեց մեզ: Աչքի լույսի պես պահենք ու պահպանենք Աստծո տունն այս ու մեր հայրերի հավատքը: Այսուհետ թող ձեր սրտաբուխ ու մաքուր աղոթքները, որ կմատուցվեն այս սուրբ տաճարում, մեր անկախ հայրենիքի բարգավաճման, զորացման ու կայունության համար, ամենազոր Աստծո օգնականությունը բերեն: Հիշենք նաեւ, որ մենք անհաղթելի ենք եղել, երբ հավաքվել ենք մեր Մայր եկեղեցու թեւերի տակ ու միասնական հավատքով ապրել»:

Իր խոսքի ավարտին թեմակալ առաջնորդը նորաօծ եկեղեցուն հանձնեց Ամենայն Հայոց Հայրապետի նվիրաբերած Սբ. Հաղորդության սկիհը, բարերարին՝ օրհնության գիրը՝ ի նշան գնահատանքի, իսկ Սուրբ Սեղանի խաչն իր փառավոր տեղը գրավեց՝ թեմակալ առաջնորդ հոր ընծայականով:

Անդրանիկ Պատարագը մատուցեց եկեղեցու նորանշանակ հոգեւոր հովիվ Տ. Սողոմոն քհն. Ավետիսյանը:

Այս հիշարժան օրը արժեւորվեց նաեւ ավանդական մատաղով, ժողովրդական տոնախմբությամբ:

Արարողությանը ներկա էին մարզպետ Հենրիկ Քոչինյանը, մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, մտավորականներ, բազմաթիվ ուխտավորներ:

*ԱՍՏՂԻԿ ԱՍՐՅԱՆ*

## ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՕԼԻՄՊԻԱԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 18-ին Սուրբ Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի շենքում տեղի ունեցավ հայոց լեզվի օլիմպիադայի եզրափակիչ՝ հանրապետական փուլը: Արդեն բարի ավանդույթ է դարձել այս ստուգատեսն անցկացնել Մայրավանքում, մի վայր, որտեղ հիմն է դրվել մայրենի լեզվով գրավոր խոսքի:

Օլիմպիադային մասնակցում էր մարզային փուլում հաղթած Հայաստանի եւ Արցախի հանրակրթական դպրոցների 90 աշակերտ:

Գիտելիքների ստուգատեսը բացվեց հանրապետական հանձնաժողովի նախագահ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի բանասիրության ամբիոնի վարիչ Դավիթ Գյուրջինյանի խոսքով: Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու մաղթանքները մասնակիցներին փոխանցեց հաստատության տեսուչ Արժանապատիվ Տեր Եղիշե ավագ քհն. Սարգսյանը:

Օլիմպիադայի ավարտից հետո մասնակիցները եղան Մայր Տաճարում, թանգարանում եւ Մայր Աթոռի «Գանձատանը»:

Հաջորդ օրը հայտնի դարձան մայրենիի իմացության ստուգատեսի հաղթողները:

Առաջին մրցանակի արժանացան Տաթեւ Մադաթյանը (Կոտայքի մարզ, Հրազդանի N9 դպրոց, VIII դասարան), Կարինե Էվոյանը (Լոռու մարզ, Ալավերդու N4 դպրոց, X դասարան) եւ Մարիամ Կարապետյանը (Շիրակի մարզ, Արթիկի N4 դպրոց, X դասարան):

Երկրորդ մրցանակի արժանացան 5, իսկ երրորդի՝ 7 մասնակից: Եվս 14 մասնակից արժանացան գովասանագրերի: Մրցանակակիրները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից պարգեւատրվեցին Մաղաքիա արք. Օրմանյանի «Համապատում» եւ Հակոբ Քյոսեյանի ու Վարդան Դեւրիկյանի «Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում» գրքերով:

*Հովհաննես սրկ. Գրիգորյան*

## ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

Վատիկանը ներողություն է խնդրել Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքից 800 տարի առաջ խաչակիրների կողմից Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսի (այժմ՝ Ստամբուլ) թալանման համար: Պաշտոնական այս գրությունը Բարթուղիմեոս Ա-ին է հանձնել Լիոնի արքեպիսկոպոս Ֆիլիպ Բարբարինին: «Դա ամոթալի օր է կաթոլիկության համար եւ վշտալի օր՝ ուղղափառության համար»,- ասված է Ս. Աթոռի հայտարարության մեջ: Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքը՝ որպես Բյուզանդական եկեղեցու իրավահաջորդ, ընդունել է Վատիկանի այդ քայլը: Կաթոլիկ խաչակիրների կողմից Կոստանդնուպոլիսը կողոպտվել է 1204 թ. ապրիլի 13-ին: Ս. Պատարագի ժամանակ, որին ներկա է եղել նաեւ Վատիկանի ներկայացուցիչը, Բարթուղիմեոս Ա-ն ընդունել է Պապի ներողությունը՝ ասելով. «Հաշտության ոգին ատելությունից առավել է»: Տիեզերական Պատրիարքը նաեւ հույս է հայտնել, որ պաշտոնական Վատիկանի կողմից նման քայլը երկու եկեղեցիների միջեւ առկա անջրպետը հաղթահարելու նախադրյալներից է:

Երգչուհի Մադոննան իր կրոնական հայացքների պատճառով հրաժարվել է համերգ տալ ուրբաթ երեկոյան: Վերջինս սկսել է հետաքրքրվել կաբբալայով եւ հուդայականությամբ: Քանի որ, ըստ հրեական ավանդության, շաբաթն սկսվում է ուրբաթ երեկոյան, երգչուհին համերգի փոխարեն նախընտրել է հրեաների համար սուրբ օրն անցկացնել ընտանեկան հարկի տակ: Մադոննան, որ վերջին շրջանում վերցրել է հրեական Եսթեր անունը, սկսել է հետաքրքրվել կաբբալայով, որով զբաղվում են նաեւ իր ամուսին Գայ Ռիչին, Ստելլա Մակարտնին եւ Բրիթնի Սփիրսը:

Պատմական գիտության Պապական խորհրդին ուղղած իր ուղերձում, որն այս տարի նշում է իր հիմնադրության 50-ամյակը, Հովհաննես Պողոս Բ Պապը շեշտել է պատմության հավաստի եւ անաչառ ուսումնասիրության անհրաժեշտությունը: Նա նշել է, որ եկեղեցականները միշտ պետք է հետաքրքրված լինեն պատմական ստույգ փաստերով, իսկ եկեղեցին երբեք չպետք է վախենա ճշմարտությունը բացահայտելուց, քանզի շատ հաճախ պատմական փաստերի սխալ մեկնաբանումը հանգեցնում է ժողովուրդների միջեւ թշնամության առաջացմանը, նոր լարվածություն ստեղծում եւ պահպանում հին խնդիրները: «Միայն պատմության անաչառ ուսումնասիրության միջոցով կարելի է հաղթահարել նախապաշարմունքները»,- համոզված է Հռոմի Եպիսկոպոսը:

Ըստ Վատիկանի ռադիոյի՝ Պորտուգալիայի 233 դպրոցներից շուրջ 50.000 աշակերտ մասնակցում են յուրօրինակ մարաթոնի. նրանք պետք է մեկ տարվա ընթացքում պորտուգալերենով արտագրեն (ձեռքով) ողջ Աստվածաշունչ մատյանը: Այդ ծրագիրն իրականացվում է երկրի ժողովրդական կրթության նախարարության կողմից, որի նպատակն է Աստծո խոսքը հասանելի դարձնել դպրոցականներին:

Ըստ Մակեդոնիայի լրատվական ծառայության՝ 200 տարվա ընթացքում առաջին անգամ Հունաստանում մզկիթ կկառուցվի: Մշակութային համալիրը եւ մզկիթը կկառուցվեն Աթենքի օդանավակայանի մոտ, որի շինարարությունը ֆինանսավորում է Սաուդյան Արաբիայի թագավորը: Չնայած տեղի ուղղափառների բազում բողոքներին՝ Հունաստանի կառավարության անդամներն արդեն տվել են իրենց համաձայնությունը: Վերջին շրջանում բազում մահմեդականներ են գաղթել Հունաստան: Հույն ուղղափառների եւ մահմեդականների միջեւ անհանդուրժողականությունը կապված է ոչ միայն Օսմանյան կայսրության ժամանակաշրջանի, այլեւ 1915 թ. Հայոց ցեղասպանության եւ 1922 թ. 350.000 հույն-պոնտացիների կոտորածների հետ:

Աֆրիկայի Անգլիկան եկեղեցիների առաջնորդները որոշել են հրաժարվել ԱՄՆ Եպիսկոպոսական եկեղեցու օգնությունից: Նայրոբիում տեղի ունեցած առաջնորդների ժողովը որոշել է շփում չունենալ ԱՄՆ-ի այն հոգեւորականների հետ, ովքեր աջակցել կամ մասնակցել են անցած տարի տեղի ունեցած միասեռական Ջին Ռոբինսոնի ձեռնադրությանը: Ժողովականները նշում են, որ շատ դժվար է հրաժարվել ֆինանսական օգնությունից, սակայն այն կենսական պահանջ է պահպանելու համար ճշմարիտ հավատքը: Նրանք նաեւ առաջարկել են ապաշխարության երեք ամիս տալ շեղվածներին, իսկ եթե նրանք չզղջան, ապա կենթարկվեն վարչական տույժի:

Թուրքիայի մզկիթներում Հիսուս Քրիստոսի մասին քարոզ է խոսվել: Մահմեդականները Նրան ընդունում են որպես մարգարե: Հետաքրքիր է, որ քարոզը համընկել է Թուրքիայում Մել Գիբսոնի «Քրիստոսի չարչարանքները» ֆիլմի ցուցադրության հետ: Ֆիլմի նկատմամբ մեծ հետաքրքրությունը բացատրվում է նրանով, որ Թուրքիան, հաչս ուրիշների, ցանկանում է երեւալ որպես մի պետություն, որը հարգում է քրիստոնեական արժեքները եւ պատրաստ է անմիջապես մտնել Եվրամիության մեջ:

Զատկական օրերին Լիպլյանի (Կոսովո) ս. Ֆլոր եւ Լավր նահատակների եկեղեցում Տիրամոր սրբապատկերը սկսել է արտասվել: Եկեղեցու քահանա Ռանգել Դենիչը նշում է, որ այն ժամանակ, երբ ինքն աղոթում էր Աստվածածնին եւ խնդրում, որ իրենց փրկի, նկատել է, թե ինչպես է Աստվածածնի աջ աչքից արցունք հոսում: Տեղի բնակիչներն այս հրաշքն ընդունել են որպես մի հավաստիացում, որ իրենք շուտով պիտի վերադառնան իրենց հայրենի տները, քանզի ներկայումս եկեղեցին գտնվում է խաղաղապահների պաշտպանության տակ:

Ալեքսի Բ Պատրիարքը հորդորել է մեծահասակներին իրենց երեխաներին հեռու պահել ԶԼՄ-ների, ինտերնետի եւ համակարգչային խաղերի բացասական ազդեցությունից: ՌԴ կրթության ակադեմիայի աշխատակիցների հետ հանդիպման ժամանակ նա ասել է. «ԶԼՄ-ներն այսօր քարոզում են բռնություն եւ անբարոյականություն: Մեզ հավաստիացնում են, որ մարդու կյանքն արժեք չունի»: Պատրիարքը նաեւ ընդգծել է, որ երեխաներին պետք է հեռու պահել այնպիսի համակարգչային խաղերից, որոնք մարդուն մղում են սպանության, ինտերնետից, որը շատ հաճախ մարդուն ոչ թե գիտելիքներով է հարստացնում, այլ՝ այլասերում եւ արատավորում:



Հուլիսի 8-ին՝ երկար դեգերումներից հետո, Տիխվինի տղամարդկանց վանք կվերադառնա ուղղափառ աշխարհում իր հրաշագործություններով հայտնի Տիխվինի Ս. Աստվածածնի սրբապատկերը: Միայն պատմական աղբյուրներում այդ սրբապատկերին վերագրվում են 2000-ից ավելի հրաշքներ: Ավանդության համաձայն՝ այն նկարել է Ղուկաս ավետարանիչը: ԺԴ դարում սրբապատկերը հայտնվել է Ռուսաստանում եւ 1383 թ., Տիխվին գետի մոտ, հայտնաբերել են ձկնորսները: Այդ տեղում կառուցվել է տաճար, իսկ 1560 թ. Իվան Ահեղի հրամանով՝ վանական համալիր: 1944 թ. գերմանացիները գրավում են Տիխվինը, սակայն տաճարի Հովհաննես քահանան փրկում է սրբապատկերը, իր հետ տանում Եվրոպա, իսկ այնուհետեւ ԱՄՆ՝ տեղադրելով Չիկագոյի Ս. Երրորդություն տաճարում: Խորհրդային իշխանությունները բազմիցս մեղադրել են վերջինիս՝ հայրենիքն ուրանալու մեջ, եւ ամեն կերպ ցանկացել ձեռք բերել սրբապատկերը: Սակայն քահանան աչքի լույսի պես պահել է սուրբ մասունքը: Իր մահից առաջ նա սրբապատկերը կտակում է իր հոգեզավակին՝ պատվիրելով, որ երբ Տիխվինի վանական համալիրը վերականգնվի, վերադարձնի այն իր նախկին տեղը: Եվ ահա երկար տարիներ հետո, Աստծո կամքով եւ Ալեքսի Բ Պատրիարքի բարեհաճ շնորհությամբ, սրբազան մասունքը կվերադառնա հայրենիք:

*Լրաքաղը՝*
*Տիգրան սրկ. ԲԱՂՈՒՄՅԱՆԻ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ
**հեռախոս՝**
**(0+31) 56780, 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. է տպագր. 3. 5. 2004թ.
Տպաքանակը՝ 2500
Գինը՝ 50 դրամ